

Քանի որ հայերը քրիստոնեությունը ընդունեցին պետականորեն 301թ. ուստի Անահիտի պաշտամունքի ընդհատակ անցնելը էլ, այսինքն՝ աղամանների կանացիակերպ տեսք ստանալն էլ ենթադրվում է այսպես՝ ուշ չորրորդ դարից հետո:

Ո՞րն է աղաման կանացիակերպ անոթների և էրլայական արձանիկների միջև զուգահեռներ անցկացնելու կարևորությունը: Այս երկու անոթների նմանությունը ոչ միայն հայկականների համար վաղեմիությունը որոշելու կոպաններ է ընձեռում, այլև ազգագրական և արեալային տիպաբանական գուգահեռների եզրակացությունների համար է հիմք տալիս, իսկ մյուս կողմից էլ հաստատում է Արմանու - Արմեն - իա անցման հնարավորությունը ևս մի նոր տեսանկյունից, հաստատում է նաև Էրլա - Արմանու տարածքի ժողովուրդների մշակութային սերտ շփումների առկայությունը:

Ինչպես հայտնի է մեզ հասած ակկադերեն սեպագիր արձանագրություններից Շարուկենը (2340 - 2284) պատմում է, ինչպես իր պապը՝ Նարամ - Սինը («Լուսնի սիրելին») Դագան աստծո օգնությամբ Եփրատ գետի շրջանում գրավեց Արմանու և Էրլա երկրները: Առ այսօր այս Արմանու երկրի տեղադրության հարցը մնում էր վիճելի, թեև նրան հարևան Էրլա - ն գտնվել և պեղվում է: Այնուամենայնիվ այն չի կարող հեռու ընկած լինել Եփրատից և Էրլայից, ինչպես Շարուկենն է վկայում: Բայց և այնպես ոչ անհայտ սեպագրագետ Բ. Հրոզնին «Արխիվ Օրիենտալին» հանդեսում 1929 թ. լույս ընծայած «Նարամ Սինը և նրա թշնամիները» հոդվածում մի խեթական սեպագիր տեքստում մեծ շտապողակա- նությամբ Արմանուն տեղադրում է Ջագրոսի լեռներում, միաժամանակ ծանոթագրելով թե այս Արմա- նուն ոչ մի կապ չունի այսօրվա Արմենիայի հետ, որի ամենահին վկայությունը գտնում ենք Բեհիսթու- նի ժայռերի վրա Արմենիա ձևով:

Այնուամենայնիվ 20 տարի անց նա վերանայում է իր այս տեղադրումը՝ փորձելով ճշգրտել Արմա- նու երկրի տեղը, քանի որ այն չէր գոհացնում իրեն, նա տեղափոխում է Արմանուն Ջագրոսից Հալեպ: Պիտի խոստովանել, թե այս տեղադրումը, թեև դարձյալ մոտավոր, ավելի էր ռեալ իրականությանը մոտ քան առաջինը, քանի որ հիշատակված Եփրատ գետի Էրլայի Ամանոսի լեռների մայրիների հարևանությամբ է նա ենթադրում՝ տեղափոխելով տեղադրումը: Մեր կարծիքով վերոհիշյալ տեղադ- րումը ավելի մոտ է իրականությանը, հեշտացնում է հարցի վերջնական լուծումը, քանի որ Արմանուն պիտի որոնել իրավացիորեն միայն Եփրատի, Էրլայի Ամանոսի միջև. ուստի և հարկ չկա այն ավելի հեռու տեղում որոնել: Որ Armana (Արմանա) երկրի և Արմենիայի միջև պատմական կապ կա, միայն հնչյունական նմանությամբ չի սպառվում այն, այլև տեղադրմամբ է հաստատվում նրանց համընկնու- մը: Մենք ցույց ենք տվել, որ բազմաթիվ բուսանուններ, որոնք ակկադական արձանագրություններում հայտնի են «արմանիական» մակդիրով, ինչպես ծիրանը, շաղգամը, չամանը, տոլոտը և այլն, միջին դարերում նույնպես դրանք շարունակվեցին կոչվել արմենիկում, արմենիկա, որի տակ հասկացվում է Հայաստանն ու հայկականը: Այսպես օրինակ ծիրանը ակկադական երկրում կոչվում էր արմանուն «հայկական», և այն այդպիսին մնաց նաև արաբական շրջանում (Թուֆթահ ալ Արմանի «խնձոր հայ- կական»), կամ ասորիները օգտագործում են առ այսօր խազգուրա արմանայա «հայկական խնձոր», որը փոխանցվեց նաև հռոմեացիներին prunus armeniaca (armenicum) ձևով ու իտալացիներին armelin- no ձևով: Ուրեմն, Արմանու երկրի և Արմենիայի կապը սոսկ հնչյունական նմանություն չէ, այլ պատ- մական իրողություն, որը համընկնում է նաև տարածքով, այն պիտի փնտրել Էրլայից հյուսիս - արևելք Օսրոնից մինչև Ադանիք ընկած տարածքում, հավանաբար այն վայրերի մոտերքում, ուր Տիգրիսի ա- կունքներից մեկն է սկսվում, և ուր գտնվել է Նարամ - Սինի կոթողը, Ամիդ քաղաքից ոչ հեռու:

Ամեն մի ժամանակակից ժողովրդի կազմավորումը հազարամյակների փոշու տակ է թաղված. ա- ռավել վիճելի ու բարդ է հատկապես հայ ժողովրդի կազմավորման հարցը: Հնագիտական պեղումնե- րի նյութերի, լեզվաբանական գուգահեռների օգնությամբ վերականգնվել են բազմաթիվ լեզուների վաղնջական կապերը: Հայերենը, որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ճյուղ շատ է չարչրկվել, և քանի որ նրա հնչյունաբանության մեջ շեղումներ են նկատվել սպասվող օրինաչափություններից, ուստի նրա ենթաշերտում ենթադրվում է մի կամ մի քանի լեզուների նստվածք, որոնք էլ հավանաբար զգալի փոփոխությունների են ենթարկել նրա հնչյունաբանությունն ու բառապաշարը:

Քանի-որ հայերենի բառապաշարում զգալի կշիռ ունեն սեմական լեզուները. հատկապես ակկադե- րենը (մինչև 400 բառ), ուստի Էրլայից պեղված սեպագիր սալիկների լեզվի վրա մեծ ուշադրություն դարձրին մասնագետները: Թեև Արմանի երկրի բնակիչների լեզուն մեզ համար դեռևս մնում է չպարզ- ված, սակայն բացառված չէ, որ այս մոտիկ հարևանությամբ Էրլայում խոսվող լեզուն՝ քանաներեն կամ այն ժամանակներում իշխող ակկադերենը որպես միջազգային լեզու, պետք է որ հայերենի ենթա- շերտում զգալի հետքեր թողած լինե՞ր: Մովսես Խորենացին, Թովմա Արծրունին, Սամուել Անեցին բազմաթիվ հայ նախարարական տների քանանական ծագումն են հիշեցնում, որպիսիք են՝ Արծրունի- ները, Գնունիները, Գնթունիները, Ռշտունիները, Գողթնեցիները, Կադմեանք, Սիսակյանները և այլն: Մ. Խորենացին գրում է, որ հայոց Վաղարշակ թագավորը սենեկապետ նշանակեց Ջերեսին, որ

ծագմամբ քանանացի՝ էր: Մի խոսքով, նույնիսկ եթե Արմանիում խոսակցական լեզուն քանաներենը չէր, միևնույնն է, քանանացիների սովոր մի հատված հետագայում ձուլվելով հայերին, հայերենի բա- ռապաշարում բերել է իրեն հետ բազմաթիվ սեմական (քանանական) բառեր, որոնցից են նաև վերոհի- շյալ հատուկ անունները, աստվածանունները, Դատա՝ Դատվան տեղանվան մեջ պահպանված, ինչ- պես Գ. Ղափանցյանն է նշում, Դագոն կամ Դագան աստծո անունը, որը նույնպես պահպանվել է հա- յոց Դագոնավան տեղանվան մեջ, որը նրա պաշտամունքային տաճարի տեղն է եղել Մուշից ոչ հեռու՝:

Բնականաբար բառապաշարային ընդհանրություններից բացի մշակութային - ազգագրական գու- գահեռներ նույնպես պիտի գտնվեին, որոնցից մեկն էլ, մեր կարծիքով վերոհիշյալ աղամաններն են՝ մայր աստվածուհու պաշտամունքից մնացած ծալտյալ կուռքերը:

Եվ այսպես իմի բերելով մեր համադրումների արդյունքները՝ կարող ենք պնդել, որ հայոց մոտ ա- դաման արձանիկները ոչ թե սկիզբ են առել քրիստոնեությունից անմիջապես հետո, այսինքն չորրորդ դարից, այլ զգալիորեն ավելի վաղ, քանի որ դրանք մինչ այդ էլ ներկայացվել են Մեծ Մոր, Սկիզբն Ա- մենայնի և ամենայն կենդանի գոյի կերպավորումը միայն քրիստոնեության մուտքից հետո է անոթի և արձանիկի միաձուլում կատարվել, այլապես, դժվար թե կնայ լինե՞ր մի քանի հազարամյակ առաջ կործանված Էրլայի կուռքերի և հայոց կուռք - անոթների միջև: Եվ քանի որ հայոց աղաման - արձա- նիկների նման անոթ արձանիկներ չեն հանդիպում այլ հարևան ժողովուրդների մոտ (պարսիկներ, ա- սորիներ, վրացիներ, կովկասյան ժողովուրդներ, հույներ, արաբներ և այլք), ապա դրանք միայն զուտ հայկական երևույթ են, ուստի և Էրլայի արձանիկների հետ եղած նմանությունը չպիտի համարել պա- տահական, այլ տեղական՝ արեալային ընդհանուր մշակույթի արգասիք. մեր արձանիկ - աղամաննե- րը հետագա բնաշրջության արդյունք են, այսինքն՝ պատմական յուրահատուկ զարգացման դրսևո- րում:

Այս արձանիկներով հաստատվում են նաև պատմական Արմանա երկրի և Արմեն - Հայք - ի կապը, որ մինչև այժմ անիրավացիորեն մերժվում էր. մեր ներկայացրած ազգագրական այս կենդանի իրեղեն նյութերը նոր լույս են սփռում հայ ժողովրդի ծագման, կազմավորման միջազեքության ու հին ամատո- լիական մշակույթների կապերի իրական լինելու հանգամանքի վրա, նոր կոպաններ են դառնում՝ ի լրա- ցումն լեզվաբանական և վիմագրական այն տեղեկությունների, որոնք մինչև այժմ իր ձեռքի տակ ու- նել գիտությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հալեպի պատմական քանգարանում պահվող արձանիկներ Էրլայի պեղումներից:
2. Վ. Հ. Բոդյան, Հայկական աղամաններ, էջ 5, Երևան, 1986:
3. B. Hrozy, Naram - Sin et ses Ennemis d'apre's un texte Hittite, p. 65 - 75. Archéorientalni; նաև՝ K. Riemschneider, Lehrbuch des Akkadischen, էջ 163, Leipzig, 1969.
4. H. A. Мкртчян, Субстанктные названия растений в Армянском языке, Древний Восток N4, с.24-37, Ереван, 1983.
5. H. A. Мкртчян, уточнение аккадских названий растений по данным армянского языка, Древний Восток, N5, с. 187-201, Ереван, 1985.
6. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, գիրք 2, 7: Սամուել Անեցի, Հավարմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 45:
7. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, գիրք 2, 70:
8. Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), էջ 124, Երևան, 1961: Г. Капанцян, Историко - лингвистические работы, I, с. 455, Ереван, 1956.